Զի հասարակ էր նեղութիւն
Պարսից ազգին, Հայ և Թուրքին։
Եւ այս ամէն յայնկոյս գետին,
Որ յԵրասխայ անուն կոչի[Ն]։
Իսկ յանցանելն յայսկոյս գետին,
Եւ յարշաւելն ըզհետ Թուրքին
Մինչև յԱմթայ ջուրն հասին,
Բազում ոճիրքս գործեցին։
Անտի դարձան ի Հայք ելին
Եւ ի վերայ Վանայ եկին։
Պատեցին, պաշարեցին
Զամուր դղեակն յաւար առին,
Զհայ և զՋաճիկսըն կապեցին
Եւ ի քարանցն հոսեցին։
Այնքան հարին, սատակեցին,
Մինչ մըսադէզ անդ արարին։
Այլ և զամուրն Երնջակին
Թողում ասել զանցս Նորին,
Որ ի յաւուրց Աւագ Զատկին

167—172. Երնջակի պաշարման ժամանակին վերաբերեալ մանրամասնութիւնները պակասում են Թ. Մեծոփեցու մօտ (էջ 17)։ իսկ Զամչեանի պատմածը (Գ. 421) հակառակ է Խլաթեցու հաղորդածին։